

ք.եղեգնաձոր

28.03.2019թ.

Վայոց ձորի մարզի վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման հանձնաժողովի նիստի

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝

Մարզպետի տեղակալ Ն.Ասատրյանը

հանձնաժողովի անդամներ՝

«Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Լ.Կարապետյանը, «Վայոց ձորի մարզի բժշկական կազմակերպությունների տնօրենները՝ Էմմա Հանեսյանը, Արեգա Բաղդասարյանը, Մանուշակ Նալբանդյանը Կարեն, Ասատրյանը, «ԱՆ ՀՎԿԱԿ-ի Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան Ե.Շիրինյանը:

Նիստին հրավիրված են՝ «ԱՆ ՀՎԿԱԿ-ի Վայոց ձորի մասնաճյուղի տնօրեն Օ.Բարսեղյանը, «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի տնօրեն Ռ.Ասլանյանը, «Հռիփսիմե ԳԲԱ» ՊՈԱԿ-ի տնօրեն Զ.Մարտիրոսյանը, «Մալիշայի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի -ի տնօրեն Գ.Հարությունյանը, «Արենիի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի-ի տնօրեն Ա.Մկրտչյանը, «Զառիթափի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն Է.Հանիսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Վայոց ձորի մարզում արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների 2018թ.-ի համաճարակային իրավիճակը և միջոցառումներն այն բարելավելու նպատակով.

/զեկուցող՝ Ե.Շիրինյան/

- 2. Ընթացիկ հարցեր և առաջարկություններ:
- 3. Հանձնաժողովի նիստի ամփոփում:

Լսեցին՝

- 1. «Վայոց ձորի մարզպետի տեղակալ Ն.Ասատրյանը ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը:

Արտահայտվեցին՝

ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան Ե. Շիրինյանը:

Նշվեց, որ Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում արձանագրվել են վարակիչ հիվանդությունների 2070 դեպք (հիվանդացության ցուցանիշը 100 000 բնակչի հաշվով 69.0%), որից ՎՀԲ-698դեպք (33.7%), ՎՀՑ-1351 դեպք (65.0%): Վայոց ձորի մարզում 2018թ. սուր հեպատիտ Բ-ի դեպքեր չեն արձանագրվել, արձանագրվել են հեպատիտ Բ-ի անտիգենակիրներ – 5 դեպք և հեպատիտ Ց –ի անտիգենակիրներ- 4 դեպք, 1 դեպք քրոնիկ հեպատիտ Ց:

Վայոց ձորի մարզում վարակիչ հիվանդությունների հիվանդացության ինտենսիվ ցուցանիշը կազմում է 18.0, որը 3.8 անգամ ցածր է հանրապետական ցուցանիշից:

Հայաստանի Հանրապետությունում 2018թ. արձանագրվել են վարակիչ հիվանդություններից մահվան 13 դեպք (0.6%), ինտենսիվ ցուցանիշը 0.4, մարզում մահվան դեպքեր չեն արձանագրվել:

Հայաստանի Հանրապետությունում մինչև 18 տարեկան անձանց մոտ արձանագրվել է արտաընդերային հեպատիտների 19 դեպք (0.9%), ինտենսիվ ցուցանիշը 0.6, մարզում մինչև 18 տարեկան անձանց մոտ դեպքեր չեն արձանագրվել:

Չնայած 2018թ. Վայոց ձորի մարզում հեպատիտ Ց-ի հիվանդացության ցուցանիշը 2017թ.-ի հետ համեմատած աճել է 4 անգամ, որը պայմանավորված է անտիգենակիրների հայտնաբերման գործընթացի ներդրման հետ, այնուամենայնիվ բավականին ցածր է հանրապետականից, իսկ

Երևան քաղաքից ցածր է 8.1 անգամ: Վայոց ձորի մարզում վիրուսային հեպատիտ Ց-ից նույապես մահվան դեպքեր չեն արձանագրվել:

2019թ.-ի առաջին եռամսյակում մարզում արձանագրվել են հեպատիտ Բ-ի անտիգենակիրների 5 դեպք, հեպատիտ Ց-ի հակազենակիր 1 դեպք, բոլորն էլ 18 տարեկանից բարձր, մահվան դեպքեր չեն արձանագրվել:

Վիրուսային հեպատիտների նկատմամբ Եղեգնաձորի ԲԿ-ում և Վայքի ԲՄ-ում միջամտություններ կատարող, արյան և նրա բաղադրիչների հետ աշխատող բուժաշխատողները, գեղեցկության սրահների աշխատակիցները, բոլոր վիրահատվողները, արյան դոնորները ենթարկվում են հետազոտության՝ ինչպես էքսպրես (կարճ), այնպես էլ ԻՖԱ մեթոդներով (ԻՖԱ մեթոդը Վայքի ԲՄ-ում ներդրվել է 2018թ.-ին), սակայն Ջերմուկի ԱԿ-ում նշված հետազոտությունները չեն կատարվում:

Սեմինար պարապմունքների շնորհիվ միջամտություններ կատարող միջին բուժաշխատողները հստակ տիրապետում են բժշկական գործիքների մանրէազերծմային, նախամանրէազերծմային, մանրէազերծման և նախամանրէազերծման որակի ֆիզիկական և քիմիական մեթոդներով հսկողության և գրանցման գործընթացներին, սակայն չեն կատարվում մանրէազերծման որակի կենսաբանական և մանրէաբանական մեթոդներով որակի հսկողություն չունեն մանրէաբանական լաբորատորիաներ և չեն կնքում պայմանագիրներ՝ ՀՎԿԱ-ի Վայոց ձորի մարզի մասնաճյուղի հետ՝ պայմանագրային հիմունքներով հսկողություն իրականացնելու համար, որը ամենահուսալից է:

Մարզում բժշկական կազմակերպությունների կողմից արտաընդերային ճանապարհով փոխանցվող վարակներ չեն հայտնաբերվում և հաստատվում, իսկ ներհիվանդանոցային և միջամտություններով պայմանավորված վարակներ՝ հատուկենտ (2018թ.-ին Եղեգնաձորի ԲԿ-ից 3 դեպք, որից 2-ը ՍՇՎ և 1 դեպք միջամտություններով պայմանավորված բերովի հետներարկումային թարախակույտ , իսկ 2019թ. առաջին եռամսյակում միայն Վայքի ԲՄ-ից 1 դեպք հետներարկումային բերովի թարախակույտ:

Քննարկման արդյունքում նիստը որոշեց.

Հանձնարարել՝

1. Ջերմուկի ԱԿ –ի տնօրեն Մ. Նալբանդյանին՝ Ձեռնարկել հրատապ միջոցառումներ 2019թ.-ին վարակիչ հիվանդությունների նկատմամբ պահանջվող և անհրաժեշտ հետազոտությունները ներդնելու կապակցությամբ:
2. Բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝


Ցուցաբերել անհրաժեշտ վերաբերմունք ներհիվանդանոցային միջամտություններով պայմանավորված, ինչպես նաև արտաընդերային ճանապարհով փոխանցվող վարակների հայտնաբերման և հաղորդման նկատմամբ:


3. Կնքել պայմանագրեր ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի հետ բժշկական գործիքների մանրէազերծման որակի կենսաբանական և մանրէաբանական մեթոդներով պայմանագրային հիմունքներով պատշաճ և հուսալի հսկողություն իրականացնելու համար:

Ամփոփելով հանձանժողովի նիստի աշխատանքերը՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Ն.Ասատրյանը ողջունեց կատարված դրական տեղաշարժը և նշեց, որ հարկավոր է ամենակարճ ժամկետում վերացնել առկա թերությունները և բացթաղումները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ  Ն.Ասատրյան

Մարզպետարանի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության պետի տեղակալ  Լ.Կարապետյան

Քարտուղար՝  Շ. Սարգսյան